«27» հունիս 2025թ. **N 372**

Քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացվող եկամուտներից ուսման վարձի եկամտային հարկի փոխհատուցման վերաբերյալ

Հարց

Քաղաքացին քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայություն է մատուցում և զուգահեռ սովորում է մագիստրատուրայի այն ֆակուլտետում, որի ուսման վարձը կարող է փոխհատուցվել եկամտային հարկից, որի վերաբերյալ քաղաքացին ծանոթացել է ՀՀ ԿԳՄՍ կայքում համապատասխան որոշմամբ: Կարող է արդյոք քաղաքացին օգտվել եկամտային հարկի վերադարձից ուսման վարձը փոխհատուցելու համար:

Պատասխան

ՀՀ հարկային օրենսգրքի՝

- 159-րդ հոդվածի 3.1-ին մասի համաձայն՝ ՀՀ-ում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ Կառավարության հաստատած մասնագիտություններով առկա ուսուցմամբ մագիստրատուրայում, ասպիրանտուրայում և օրդինատուրայում սովորող (ուսանող) վարձու աշխատողի ուսման վարձը փոխհատուցվում է ուսումնական տարվա ավարտից հետո՝ օրենսգրքի 160.1-ին հոդվածով սահմանված կարգով,
- 160.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված (այդ թվում՝ հարկային գործակալի միջոցով) եկամտային հարկը ուսման վարձավճարի փոխհատուցման նպատակով վերադարձվում է մեկ տարվա ընթացքում ֆիզիկական անձի աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով հաշվարկված եկամտային հարկի գումարի չափով, բայց ոչ ավելի, քան ՀՀ-ում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ Կառավարության հաստատած մասնագիտություններով առկա ուսուցմամբ մագիստրատուրայում, ասպիրանտուրայում և օրդինատուրայում սովորողի (ուսանողի) ուսման համար վճարված գումարը:

Նույն հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց՝ ուսման վարձավճարի փոխհատուցման նպատակով եկամտային հարկի գումարների վերադարձը կատարվում է ՀՀ կառավարության 03.07.2020թ. N1125-Ն որոշմամբ սահմանված կարգով:

Վերոնշյալ կարգի 4-րդ կետի համաձայն՝ սովորողի համար ուսումնական տարվա որևէ ամսում հաշվարկված աշխատավարձից և դրան հավասարեցված վճարումներից տարբերվող այլ հարկվող եկամուտներ վճարված լինելու դեպքում այդ եկամուտների մասով հաշվարկված և վճարված եկամտային հարկի գումարները վերադարձման ենթակա չեն:

ՀՀ կառավարության 18.06.2020թ. N1035-Ն որոշման NN 1, 2 և 3 հավելվածներով հաստատված են ՀՀ-ում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների մագիստրատուրայի, ասպիրանտուրայի և օրդինատուրայի այն մասնագիտությունները, որոնցից որևէ մեկով առկա ուսուցմամբ սովորողի (ուսանողի) աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված եկամտային հարկն ուսման վարձավճարի փոխհատուցման նպատակով վերադարձվում է:

Հաշվի առնելով վերոգրյալը, հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 18.06.2020թ. N1035-Ն որոշմամբ հաստատված մասնագիտություններով առկա ուսուցմամբ մագիստրատուրայում, ասպիրանտուրայում և օրդինատուրայում սովորողի (ուսանողի) ուսման վարձի փոխհատուցումը կատարվում է օրենսգրքի 160.1-ին հոդվածին համապատասխան և ՀՀ կառավարության 03.07.2020թ. N1125-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ սովորողի (ուսանողի) աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով հաշվարկված և վճարված եկամտային հարկի գումարներից, իսկ նշված եկամուտներից տարբերվող եկամուտներից (այդ թվում՝ քաղաքացիա-իրավական պայմանագրերի շրջանակում ստացվող եկամուտներից) հաշվարկված և վճարված եկամտային հարկի գումարները վերադարձման ենթակա չեն:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am